

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԱՏԱ ՍՊԸ-ն ԷԱՃԱՊԶԲ-ԱԻՆ-22/27 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	Ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
3	ԱՏԱ ՍՊԸ	ԱՏԱ ՍՊԸ	ԱՏԱ ՍՊԸ	<p>Մեղալը բաղկացած է չժանգոտվող ցինկապատ պողպատե կախիչից և դրան կապողակով ամրացած սկավառակից: Կախիչը ասեղային ամրակով:</p> <p>Սկավառակն արտադրվում է առնվազը 75% պղնձի պարունակությամբ համաձուլվածքից, փայլատ մակերես ստանալու տեխնոլոգիայով (Էլեկտրոեռոզիոն մշակման մեթոդով ստացվող փայլուն մատային մակերես Ն2 սանդղակով), դրոշման եղանակով, անցնում է հատուկ գալվանական մշակում և ոսկեպատվում 900-ից բարձր հարգի ոսկով՝ նվազագույնը 0,5 մկմ հաստությամբ: Տրամագիծը՝ 38մմ, հաստությունը՝ 4մմ (շեղում՝ +/- 0.2մմ): Մեղալն իրենից ներկայացնում է ոսկեգույն շրջանակ, որի կենտրոնում մուգ կապույտ գույնի 26 մմ երկարություն ունեցող հավա-սարակողմ եռանկյուն է՝ փրկարարի խորհրդանիշը շրջանին ձուլված: Որպես</p>

նրա շարունակությունն փրկարարի խարիսխն է, որի ծողը դեպի ներքև վերածվում է 32 մմ երկարություն ունեցող պատյանի մեջ դրված սրի: Սրի կոթին, 10x4 մմ չափեր ունեցող բռնակի հորի-զոնական ծողիկին գրված են «ԱՆՎԵՀԵՐ», իսկ շեղբին՝ ուղղահայաց դիրքով «ՓՐԿԱՐԱՐ» բառերը: Խաչ հիշեցնող սուրը վերջանում է ջրափրկարարի խորհրդանիշ հանդիսացող 24 մմ լայնությամբ խարիսխով: Մեդալի շրջանակի եզրագծի ձախ մասում գրված են «ARMENIA», իսկ աջ մասում՝ «ՀԱՅԱՍՏԱՆ» բառերը: Մեդալն ունի վեցանիստ սեղանաձև կախիչ՝ 30x45 չափսերով, վրայից ուղղանկյունաձև ոսկեգույն շերտածողիկ՝ «ՀԱՅԱՍՏԱՆ» մակագրությամբ: Կախիչի դարձերեսին ամրացված է մեդալը հագուստին ամրացնելու հարմարանք: Կախիչը մուգ կապույտ է (CMYK 100;100;6;31) 2 ուղղահայաց 3 մմ լայնությամբ կարմիր (CMYK 10;100;100;49) գույակներով, որոնք կախիչի ձախ եզրագծից ունեն 4 մմ հեռավորություն: Կարմիր գույակները 2 կողմից եզերված են 1 մմ լայնությամբ դեղին (CMYK 4;20;95;13) և կանաչ (CMYK 80;7;100;35) գույակներով: Մեդալի դարձերեսին հորիզոնական 3 տողերով գրված են «ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻ-ՃԱՎԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» բառերը, 2 տողով՝ «MINISTRY OF EMERGENCY SITUATIONS RA» բառերը և լազերային եղանակով դաջվում է մեդալի համարը (սկսած 0814-ից): Կատարվող գրառումների անվանանիշը 3.2 մմ ուղղահայաց ուղղությամբ, տառատեսակը՝ Arial Armenia: - Մեդալների արտաքին տեսքը պետք է համապատասխանի համաձայնեցված նմուշի արտաքին տեսքին՝ ունենալով նույն

				<p>համաձուլվածքը, ռելիեֆիային պատկերները, գրվածքները, ժապավենը և գունավորումները: Թվային տեխնոլոգիաների կիրառմամբ դրոշման եղանակը ապահովում է մեդալների միանմանությունը և չափսերի բարձր ճշտությունը: Ցանկացած երկու կրծքանշանի չափսերի շեղումը ոչ ավել քան 0.1 մմ: Մեդալի դարձերեսին դրոշմման եղանակով դաջվում է արտադրողի ապրանքային նշանը: Չի թույլատրվում` - Պատկերների և գրվածքների աղավաղում: - Մակերեսի վրա խազեր, քերծվածքներ, այլ հետքեր: Մատակարարը մեդալների նմուշների եռաչափ (3D) մոդելավորված նկարները և հետո նմուշները պետք է նախապես համաձայնեցնի պատվիրատուի հետ: Մեդալի հետ տրվում է վկայական (Էսքիզ 3):</p>
--	--	--	--	--

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

АТА ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ЕЦДЦПДР-ЦН-22/27 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	товарный знак	наименование производителя	технические характеристики
3				